

**Հայաստանի Հանրապետությունում Կայունացման և Զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագիր**

**Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ) Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր**

**(Խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)**

**Վերնագիր:** Անհատ խորհրդատու՝ «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար» մշակված ուղեցույց-գործելակարգի կլինիկական մասի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար

**Ծածկագիր:** NCDPCP/IC/A-C/020-05

**Իրավասություն:** Բոլոր խորհրդատուները, որոնք համապատասխանում են նշված պահանջներին

**Սկիզբ:** Օգոստոսի 10, 2020թ.

**Տևողություն:** 25 ամսվա ընթացքում 35 մարդ/օր

**Տեղակայում:** Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզեր

**Աշխատանքի նկարագիր:** Հայաստանի Հանրապետությունում Կայունացման և Զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար» ուղեցույց-գործելակարգի կլինիկական մասի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար

**Աշխատանքային հիմնական պարտականություններ:**

- Մշակել վերապատրաստման դասընթացի ուսումնական պլանը՝ ըստ կրթական ձեռնարկի  
<https://healthpiu.am/wp-content/uploads/2020/07/Կրծքագեղձի-սքրինինգ-Ուղեցույց-գործելակարգ-compressed.pdf>
- Մշակված կրթական ձեռնարկի հիման վրա ստեղծել Power Point պրեզենտացիա՝ վերապատրաստման դասընթացների ժամանակ կիրառելու համար;
- Ըստ սահմանված ժամանակացույցի՝ իրականացնել վերապատրաստման դասընթացներ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի ԱԱՊ օղակի բժիշկների համար.

- ✓ բոլոր 3 մարզերում վերապատրաստման դասընթացները նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 15 խմբում;
- ✓ յուրաքանչյուր խմբի հետ 2 դասընթաց՝ յուրաքանչյուրը 6 ակադեմիական ժամ տևողությամբ;
- ✓ յուրաքանչյուր խմբում նախատեսվում է ներառել շուրջ 20 մասնակից:
- Իրականացնել վերապատրաստման դասընթացի արդյունավետության գնահատում՝ նախապես հաստատված հարցաթերթերի միջոցով:

**Պահանջվող որակավորում:**

- Բարձրագույն բժշկական կրթություն, հետբուհական մասնագիտացում ուռուցքաբանության գծով;
- Դասավանդման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ;
- ՈՎՀ և մամոլոգիայի ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ;
- Գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց ունակություններ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

**Վարձատրություն:** Մրցակցային

**Դիմելու Գործընթաց:** Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter): procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ. փոստերին, վերնագրում հստակ նշելով “Individual Consultant-Trainer (Mammologist) NCDPCP/IC/A-C/020-05”.

**Սկսած:** 16 Հուլիս, 2020թ.

**Վերջնաժամկետ:** 27 Հուլիս, 2020թ.

**Կազմակերպության մասին:** ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ գնումների ու ֆինանսական գործառույթների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**